



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

657

9(4)

U-65

Խ Ն Դ Ի Ր

138

# ԱՐԵՒԵԼԵԱՆ

ԵՒՐՈՊԱՅԻ

*Printed in Turkey*

ԱՐԴԻ ՎԻՃԱԿԻՆ ՄԷՉ

*Հիշ. խոսքն եղավ Աշխարհ*

*Հիշ. խոսքն*



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի Վ. ՅՍ. Չ. Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՅԱՐՄԱՇ

— 1876 —

9(4)  
Ա-65

*Հիշ. խոսքն*



6626

(A)  
4-85

20

# ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴԻՐՆ

## ԵՒՐՈՊԱՅԻ

ԱՐԳԻ ՎԻՃԱԿԻՆ Մ Է Զ

Printed in Turkey



396  
39

9

Ամէն անգամ՝ որ Եւրոպայի քաղաքականութեան մէջ արեւելեան խնդիրն երեւան կը դայ, շատերն իրենք իրենց կը հարցունեն թէ ինչպէս կ'ըլլայ՝ որ այսչափ տարիներէ ՚ի վեր սա խնդիրը չկրնար լուծուիլ։ Կարգէ դուրս բան մը դարձաւ՝ որ զիւանագիտութիւնը չկարաց հաստատուն վիճակ մը գտնել մեր այս երկրին համար, եւ առաջքն առնուլ այն տաղնապին՝ որ տասն եւ հինգ կամ քսան տարին անգամ մը բոլոր աշխարհի խաղաղութիւնը կը վրդովէ։ Սակայն, եթէ խնդրոյն եղբրը մարդ մը մօտէն հետազօտէ, այն ատեն պիտի կրնայ հասկնալ թէ խնդիրն ինչ անտանելի դժուարութիւններ ունի, եւ փոխանակ զարմանալու՝ պիտի իմանայ թէ անանկ սոսկայի առեղծուած մ'է եղբր այս խնդիրը, որոյ ծանրութիւնը կշռել անհնար է առանց պարագայները զիտնալու։ Եւ պիտի տեսնէ՝ թէ քաղաքականութիւնը մինչեւ հիմայ ՚ի հետուստ նախատես խորհրդովք ապագայ որոշումը զըտնելու համար կ'աշխատի եղբր, որմէն անդին քայլ մը յառաջ չէ դացած քաղաքականութիւնը։

Ահաւասիկ տասն եւ ութն ամիսներէ ՚ի վեր է՝ որ Պօսնայի եւ Հերսէկի մէջ ապստամբութիւններ ծա-

20 04



գելով Արեւելքի խնդիրը Եւրոպայի ամէն կողմը վերստին յուզեցաւ : Այսչափ ամիսներէ 'ի վեր կառավարութեանց դիւանները խնդիրը հետզհետէ ծանրանալուն համեմատ աստիճան առ աստիճան զօրաւոր միջոցներ ձեռք առին . առաջ հիւպատոսներ զրկեցին , վերջը Անտրասի ծանուցագիրը հնարեցին , վերջապէս ալ Պէռլինի յիշատակագիրը : Հիւպատոսները բան մը չկարացին , Անտրասի ծանուցագիրը պարապն ելաւ , Պէռլինի յիշատակագիրն ալ Անգղիան մերժեց : Պուլկարիոյ արկածին եւ Սերվաց ու Գարատաղցոց առաջին պատերազմաց ատենները Միլան եւ Նիքոլա իշխանները Փարիզի դաշնադրութեան ստորագրող պետութեանց առաջարկեցին՝ որ միջամտեն , առնք ալ զինադադար մը հրահարեցին , եւ Գրան դիտաւորութիւնը երեւան բերող երկար խօսակցութիւններն ըլլալէն յետոյ , կարճ ժամանակի համար զինադուլ մը որոշեցին , զինադուլ մը , որ , — չգիտեմ որո՞յ — օգտակար ըլլալու համար գէշ սահմանուեցաւ : Սամանեան կառավարութիւնը խաղաղութեան փոխարէն , որպէս թէ անընդունելի , պայմաններ առաջարկեց . Սերվաց ամբութիւնները գրաւել , հարկն աւելցունել եւ Սերվաց իշխանը կ'Պօլիս բերել : Ստար տէրութեանց զիւաններն ալ այս պայմանները ծանր համարելով՝ Նախ քան զպարտէս ինքնօրինութիւն մը տալու առաջարկութիւնը ներկայացուցին : Գուռը տեսնելով որ եղած առաջարկութիւնը իւր օրինաւոր շահուն հակառակ է , եւ ինքնօրինութիւն ըսուածը ամէն պետութեանց մտքին մէջ նսյն եւ մի մեկնութիւն կամ իմաստ չունի , ինք իւր կողմէն երկու բան ներկայացոյց . զինադադար վեցամսեայ , եւ ազատական բարենորոգումն անխտիր բոլոր հպատակաց համար : Բայց այս ծրագիրն Ռուսիոյ հաճոյից ձեռք չտալով խիստ կարճ ժամանակի համար անկայուն զինադադար մ'ընդունուեցաւ , որ այս միջոցին կ'Պօլիս գումարուելիք Դեսպանատնոց մէջ

խաղաղասիրական կարգադրութեանց վրայ վիճարանուի , բայց ծրագիրն յայտնի չէր : Այս անկայուն իրողութեանց մէջ Ռուսաց հասարակական կարծիքը համալուրութեան գաղափարին վրայ ուժով ուժով կը չեչոէ , բազմաթիւ Ռուս կամաւորներ սերվական բանակին կը յարին , որոցմով մէկտեղ սերվացին՝ որ երբեմն ապստամբութեան սկիզբը երկչու էր , վարժութեամբ զօրանալով աւելի ամրացաւ : Թուրքիոյ հայրենասիրական եւ կրօնական զգացումն արդարապէս բորբոքելով աղետը հետզհետէ ընդարձակեցաւ , Թեսալոնիկէի տխուր դիպուածը եւրոպացոց մէջ տարածուելու վրայ եղած գոնէ չափազանց ննթաղութիւններուն տեղի տուաւ : Մէկ խօսքով , իրերն հետըզհետէ աւելի եւս ծանրացան : Պատերազմի բանակները այնչափ մեծ արդիւնք մը չերեցուցին . թէպէտ եւ Ալեքսանդր առնուեցաւ , բայց ասչափով տաճկական բանակը Սերուիոյ մէջ շատ տեղ յառաջ գացած չեղաւ . Գարատաղի , առջեւ ալ ընդհանրապէս անըստոյգ վիճակ մ'ունեցաւ : Գիմամարտ իշխաններն ալ բնաւ յաջողութիւն մը ձեռք բերել չկրցան , եւ շատ շատ հաղիւ կրցան արգելուլ՝ որ Սուլթանին զօրաց արշաւանքն իրենց երկրին մէջ յառաջ չերթայ : Դեսպանագրիտական ջանքերը գրեթէ անպտուղ մնացին , ամենէն հանճարեղ եւ ամենէն բարեխառն մտքերն ալ անհանդիստ ընող դժուարութեանց մէջ ինկան : Սակայն ասոնց ամենուն ալ պատճառները կան :

Տարիէ մը 'ի վեր բնաւ արդիւնք մը չշահուիլը թէ եւ անհեթեթ կը թուի , բայց օրինաւոր եւ կատարելապէս բնական բանն այն է : Մենք կ'ուզենք՝ որ արեւելեան խնդրոյն դիտաւոր տարերքները , որ դարէ մը 'ի վեր աւելի զգալի եղած են , հետազօտելով՝ կարենանք ցցունել՝ թէ որչափ հակասութիւններ կան Արեւելքի մէջ , որչափ անհամար եւ մեծ շահեր կան իրարու հակառակ , որ մէկզմէկ կը խափանեն , եւ որչափ ծանրակշիռ հաշիւներ կան անոնց վրայ : Կը կարծեմք՝ թէ մեր այս հետաքննութիւնը զիւանագիտաց



վարանումները պիտի արգարացունէ, եւ բացատրէ՝ թէ ինչպէս ամենէն զօրաւորն ալ չկրնար յաղթանակ տանիլ իւր գաղանի ոսոխին վրայ: Մանաւանդ պիտի հասկցուի թէ այսօր ուրիշ ժամանակէ աւելի որչափ մեծ խոհեմութիւն հարկաւոր է եղեր՝ որ մի գուցէ այսխարհի վրայ նմանը չտեսնուած սարսափելի պատերազմի մը տեղիք տրուի:

Ա:

Արեւելեան խնդրոյն բնական հիմը այն ատեն զըրուեցաւ՝ երբ այլացեղ եւ այլակրօն ժողովուրդ մը Եւրոպայի տիրելով հին երկրի աշխարհագրական ամենագեղեցիկ գիրքը գրաւեց, եւ շատ մը քրիստոնեայ աղգաց աղատութեան եւ քաղաքակրթութեան դէմ զօրացաւ: Այս խնդրոյն առաջին շրջանը պատերազմով անցաւ, եւ երեք դարէ 'ի վեր հազիւ Թուրքը Պալքաններու ցամաքակղզին կառնցունելոյ վրայ խնդիրը կանգ առաւ: Այսչափ բան մը ձեռք բերելու համար Գերմանիա, Լեհաստան, Հունգարիա, Սպանիա, Հոլովմ կամ Պապ եւ Ռուսիա մերթ յաղթելով եւ մերթ յաղթուելով շարունակ պատերազմեցան: Այս յաղթելի աշխարհակալը երեք դարէ 'ի վեր է՝ որ ամէն բանի մէջ դժբաղդաբար հետզհետէ նուաղեցաւ, ղերջին երեք դարերուն մէջ Օսմանցին քիչ պատերազմներ ունեցաւ, բայց այս խաղաղութեան միջոցին բնաւ յառաջադիմութիւն չըրաւ: Ընդ հակառակն, եւրոպական ազգեր՝ որ երբեմն շատ ստորին էին քան իրենց անարկու թշնամին, քիչ քիչ զօրացան եւ կազմակերպեցան: այս կողմ որչափ ակարացաւ՝ անդին եւրոպացիք այնչափ աւելի ստուարանալ սկսան, եւ ասան ութերորդ դարուն վերջերը խնդիրը բոլորովին ուրիշ երեւոյթ առաւ: Իրողութիւնք ծայրէ 'ի ծայր փոփոխուելով, եւրոպական կառավարութիւնք, որ

երբեմն ահու գողման մէջ էին յերեսաց օսմանեան աշխարհակալութեան, սկսան երազել թէ սորա օրհավն ժամանակ արդեօք մէջերնէն որը յարմարութիւն պիտի ունենայ կողոպուտին:

Արեւելեան խնդրոյն երկրորդ շրջանը այս դարու սկիզբէն կ'սկսի: Այն կարծուեր թէ այս շրջանն այսչափ պիտի կրնար յերկարիլ, բայց տեսնուեցաւ՝ որ Թուրքիա կարծուածէն շատ աւելի հաստատուն է եղեր: միւս կողմանէ օտար ազգաց անհերքելի շահերը պատճառ տուին իւր հաստատութեան, մէկ խօսքով, անհնարին փոթորիկներու մէջ դեռ այս շրջանը կըտուէ, եւ ստուգիւ խնդիրն ալ անլուծելի մնացած է:

Խնդրոյն այս ժամանակի քաղաքական հանգամանքը Ռուսիոյ կայսեր եւ Թուրքիոյ Սուլթանին Քայնարճքի (1774) դաշնագրութենէն երեւան եկած է: Այս դաշնագրութիւնը երեւան հանեց Եւրոպայի կանուխէն զգայածը՝ որուն դեռ փորձ չուէր: նախ 'իրան տխուր վիճակը, որ 'ի ներքուստ մաշուած էր աղքատութեամբ. եւս եւ Ռուսիոյ ու Ասիոյ փաշաներուն ապօտարութիւններով, եւ ձախող պատերազմաւ ոչ միայն երկիր վրայ տուած էր՝ այլ մինչեւ անգամ օտար տէրութեանց իւր գործոց միջամտելուն ալ զիջած էր: Ռուս գործակատարներ իրենք զիրենք 'ի հարկին 'ի նպատակով Պօլսոյ քրիստոնէից ներկայացուցչի պաշտօնով կ'երեւցունէին, եւ Բեթրսպուրկի կառավարութիւնը Գանուբեան նահանգաց գործերուն կը խառնուէր: Ասկէ դատ ուրիշ հետեւանք մ'ալ ունեցաւ այս դաշնագրութիւնը, այսինքն, Ռուսիոյ յառաջադիմութիւնն ալ յայտնեց աշխարհի: Մարիամ — Թերեզայի առագ պաշտօնեայն կ'երկնչէր այս յառաջադիմութենէն: — Այս դաշնագրութեան ուժով, ըսած է, Ռուսը Սեւ ծովու վրայ պիտի կրնայ տիրաբար գործել, եւ կերչի սահմանազլխէն քառասուն ութ ժամով կ'Պօլսոյ պարխպները հասնիլ —: Ըսել է իրաց ինչ վախճանի հայելը, եւ Եւրոպական պետութեանց քա-



Պաշտօնակազմի մէջ այն ժամանակէն ՚ի վեր ինչ անհանգստութիւններ ծագելիքը հետուանց քիչ մը երևելի սկսած էր : Արեւելքի գործերը այս ատեն սկըսեցին ուրիշ կերպարանք մտնել : Օսմանեան կայսրութիւնը՝ որուն հետ միշտ պատերազմաւ կ'ըքաղէին երբեմն՝ առջի անհարութիւնը կորսնցոյց . Եւրոպայի քաղաքացիութեան մէջ իբրեւ ամենակարեւոր տարր մը եղաւ , առանց որոյ ընդհանուր հաւասարակշռութիւն պահել անհնարին է : Որչափ որ արեւմտեան պետութիւնք մեծաւ մասամբ իրենց հին եւ դարաւոր թըշնամութիւնը՝ որ ունէին Գրան հետ՝ վերցուցին իրենց քաղաքականութենէն , սակայն ուրիշ նոր եւ կատարելագոյն ճշգրիտ քաղաքականութիւն մը ձեռք չառին . շահասիրութեան ծարաւը , պարագայներն եւ խառն խնդիրները չթողին իրենց՝ որ խելքով վարուելին , շատ քիչ անգամ միաբանեցան , առանձին առանձին մնալով ալ հաստատուն բան մը չկրցան ընել , իրենք իրենց ընելովը միշտ իրարու դէմ ճակատեալ մնացին , եւ Արեւելքի գործոց վրայ առաջին հեղինակութիւնը մերթ այս եւ մերթ այն պետութեան ձեռք պարբերաբար շրջեցաւ . Քայնարճըքի դաշնագրութենէն աս դին միայն Ռուսն է՝ որ Թուրքիոյ դէմ հաստատուն քաղաքականութիւն մը ձեռք առած է , եւ դարձաբար Թուրքիա ալ Ռուսիոյ դէմ , մին դիմադրելու՝ միւսն յարձակելու , որով այս երկու պետութիւնք խնդրոյն երկու որոշ եւ յայտնի եղերքները դէմ առ դէմ կեցած են այսօր :

Պատմութեան այս շրջանին վրայ մէկ ակնարկ մը նետելը բաւական է ցոյց տալու՝ թէ կառավարութեանց մասնական փոփոխմունքներն ինչ արժէք ունեցան : Քայնարճըքի դաշնագրութենէն յետոյ Թուրքիոյ դէմ առաջին անգամ Աւստրիա եւ Ռուսիա պատերազմեցան նիդակակցութեամբ . 1791 ին եւ 1892 ին Շիշթովի եւ Նաշի դաշինքը գրուեցաւ . 1799 ին Գաղղիա Նիդպոտտի վրայ յարձակելով կայսրութեան ամբողջութեան սպառնալիք ըրաւ , 1802 թուականին ալ

Գրան հետ բարեկամացաւ . անագան ուրեմն Անգղիա Արեւելքի վրայ Նաբոլէոնի հետ պատերազմ ունենալու համար , Գաղղիոյ դեսպանը կ. Պոլիսէն մերժել տուաւ , եւ Տարտանելի ամբողջութիւնքը եւ Թուրքիոյ նաւատորմին հրամանատարութիւնը ուղեց , նաւերն ալ մինչեւ Սէրայ—Պուրնուի դիմաց տարաւ կայնեցուց , վերջերը Սուլթանին սերտիւ բարեկամացաւ . բայց երբ Ռուսք 1812 թուականին Պետրասպլիա զըրաւեցին Պուքրէշի դաշնագրութեամբ՝ չկրցաւ արդելու : Քանի մը տարիներ յետոյ Անգղիա եւ Գաղղիա համաձայնութեամբ Ռուսաց՝ Յունաստանի ազատութիւնը երաշխաւորեցին , եւ Օսմանեանց նաւատորմիղը ՚ի Նաւարին այրեցին . տասն եւ հինգ տարի անցաւ , երբոր Գաղղիա Մէնէմէտ Ալիի օգնեց իւր Սուլթանին դէմ պատերազմած ատենը , Անգղիա , Աւստրիա , Բրուսիա եւ Ռուսիա Սուլթանին օգնեցին , որովհետեւ երեքը Թուրքիոյ ամբողջութիւնը պահել կուղէին , վերջինն ալ ձերացեալ կայսրութիւն մը Նիդպոտտի վրայ չերիտասարդացունել : Գաղղիա եւ Անգղիա 1853 թուականին Թուրքիա փրկելու համար միաբանեցան : Իսկ այսօր Գաղղիա ինքզինք քաշած լուռ կը կենայ՝ որպէս զի վերահաս չարիք մը բոլորովին ծանրանայ . Աւստրիա իրեն հպատակ սլաւ ցեղերը կարենալ բռնելու համար ստիպուած է անշարժ եւ անստոյգ դիւրք մը բռնել : Գերմանիա , դոնէ առ երեւոյթս բանի չը խառնուել կը ցուցնէ : Հարիւր տարիէ ՚ի վեր քաղաքագիտութիւնը սա երկու վարկածի մէջ կը դառնայ . կամ Թուրքիոյ այ՝ վէճակը պահել կամ արմատաբար լուծել . բայց չկրցաւ մէկը կամ միւսը հաստատուն բռնել : Եւրոպացուց այս երկու կէտերուն վրայ տատանելը արդի քաղաքականութեան կերպ մը յատկութիւնը դարձած է , որով ամէն ճգնաժամեր երեւան դալուն՝ Թուրքիա իւր առջի վիճակին մէջ պահելը անկարելի կը դատուի . բայց երեւակայութեան առջեւն եկած սոսկալի հետեւանքը ամէն ինչ անստոյգ թողած է :



Բ.

Եւրոպիոյ քաղաքագիտութեան պատմական կնճի-  
որն այսպէս հասկցունելնէս յետոյ կըմնայ մանրամաս-  
նօրէն քննել թէ պատճառն ինչ է՝ որ Արեւելքի դոր-  
ծոց համար Եւրոպայի քաղաքականութիւնը կը վարա-  
նի, եւ ընդհանուր մտատանջութիւն կը պատճառէ :  
Եայց առաջ բացատրենք՝ թէ ինչ է Թուրքիոյ արդի  
փիճակը, եւ դարմանելու համար մինչեւ հիմայ ինչ  
միջոցներ գործածուեր են :

Օսմանեան կայսրութեան վրայ Եւրոպացիք հիւան-  
դի աչքով կը նային, ու խնդիրն ալ այս տեսութեամբ  
գաղափարած են : Աւստի բնական կ'ըլլայ հարցումն ը-  
նել թէ Թուրքիա ստուգիւ հիւանդ է . եւ թէ Թուր-  
քիոյ անկումն ենթադրելն սխալ տեսութեան ցնորք  
չէ : Համոզուիմ՝ թէ Թուրքիոյ անկումը երեւակա-  
յուածէն աւելի զիրին է, եւրոպական պետութիւնք  
յառաջադիմեցին, բայց ինչ ասպացոյց ունինք՝ թէ  
Թուրքիա յետադիմեց, եւրոպացիք սուբալով յառաջ  
գացած ատենը Թուրքիա ասիացոց ընդհանուր  
ախտէն բոնուած անշարժ կեցած է . հիմայ առաջին  
Մէհէմէտին եւ Միւլէյմանին ժամանակէն գէշ կը կա-  
ռայարուին, Ո՛չ, Թուրքիոյ զօրականները նոյն եւ մի  
քաջութեամբ, նոյն համբերութեամբ եւ նոյն անձ-  
նանուիրութեամբ կը կռուին այսօր՝ ինչպէս երբեմն ի-  
րենց աշխարհակալ թագաւորաց ատեն, միայն թէ այն  
ժամանակի ղինուորական արուեստը եւրոպացոցմէ  
վար չէր մնար, եւ վարչութեան կերպերնին ալ Եւրո-  
պայի աշխարհաց կերպէն տարբեր չէր : Իսկ եւրո-  
պացիք իրենց կլիմային յատուկ եղած յառաջադիմու-  
թեան սիրով նշանաւոր վերանորոգումներ ըրին, եւ  
թէ ղինուորական թէ քաղաքական փիճակով այլա-  
կերպեցան դիւտովն, մինչդեռ Օսմանցին Ասիոյ բնա-

կան եղած ծանրադանդաղ յատկութեամբ, դէնքն ալ  
օրէնքն ալ, արուեստն ալ, վարչութեան կերպն ալ  
չաա չնչին եւ շատ անկատար յառաջ տարաւ, որով  
իւր շուրջն եզոդ ազգերէն անհամեմատ ետ մնաց :  
Մանաւանդ վերջին երկու դարուց մէջ որչափ յառա-  
ջադիմութիւնը Եւրոպայի մէջ մեծաքայլ ընթացաւ,  
այնչափ աւելի Թուրքիոյ մէջ ծուլութիւնը թանձրա-  
ցաւ . սակայն պէտք է դիտնալ՝ որ եթէ առաջին եւ  
բարձր կարգերուն մէջ ասպականութիւն կը տեսնուի,  
որ բնաւ չկար առջի ժամանակները, եւ առաջին հան-  
ձարեղով թիւնը պակասած կը գտնեմք, սակայն չենք  
կրնար ըսել թէ Թուրքիոյ ժողովուրդը բողբոլվին վատ-  
թարացաւ, ընդ հակառակն այնպիսի յատկութիւններ  
ունի՝ որ զօրաւոր ժողովրդեան յատուկ են, արիա-  
սիրտ է, եւ դիմադրաւ ամէն վտանգաց, իւր կրօն-  
քին վրայ ողջ զգացումն ունի, փրկելու բնազդու մը  
ալ ունի՝ որ բնաւ չճոխիր, եւ ոգի մ'ունի իշխանու-  
թեան անսացող, որ դիւանադիտական վարչութեան  
ամենէն աւելի փնտռած բանն է :

Կ'սթաղգութիւն մը՝ որ ունին՝ ասիացի ըլլալին  
է, այսինքն անշարժ եւ եւրոպացոց պէս յառաջադի-  
մութեան ընդունակ չըլլալնին : Ապա թէ ոչ, կարելի  
բան է՝ որ քաջ եւ հլու ժողովուրդ մը, ժողովուրդ  
մը՝ որ իրարու ատելի ազգեր այսչափ ժամանակ իւր  
լծոյն տակ պահեց, ազգ մը՝ որ յաղթականի ձիրքե-  
րով զարդարուած է, յառաջադիմելու համար ուրիշ  
պետութեանց օրինակին, խրատին եւ ճնշելուն սպա-  
սէր . մինչեւ հիմա ինք իրեն ամէն բարենորոգումն  
չատնոց ըրած կ'ըլլար : Բայց ինչ օգուտ, իւր ասիական  
բնութիւնը ամէն յառաջադիմութեան արգելք եղած  
է, եւ ասոր համար ինչ որ էր սկիզբէն այնպէս մը-  
նաց, Օսմանեան կայսրութիւնն աւելի ասիական է  
օտար քան եւրոպական . եթէ եւրոպացի ընելու եւ օտար  
քան եւրոպական վարելու ձեռք զարնուի, թէ  
քաղաքակրթութեամբ վարելու ձեռք զարնուի, թէ  
աշխարհագրական պիտի ըլլայ գործուած սխալը եւ  
թէ դիւանադիտական : Կեդրոնական Ասիոյ ժողովրդ-



դոց, Պարսից, Չինաց եւ Հնդկաց պէս, ինչ որ էին յառաջ հոն դիտոյ առած են: Ապականեալ չէ ժողովուրդը, բայց վերափոխեալ չէ, ինք իւր յատուկ քաղաքականութիւնը կը պահէ. ոչ եւրոպացւոց վարչութեան կերպն ունի, որովհետեւ իւր սովորութեանց դէմ կուգայ, ո՛չ անոնց արուեստները, որովհետեւ պէտքը չըզար, ոչ անոնց դաղմագիտութիւնը, որովհետեւ իւր առջի հին գաղափարով պատերազմելը միայն դիտէ, ոչ անոնց գրամական բարեկարգութիւնը, որովհետեւ երկրին մէջ գաղափար մ'ունեցող չկայ՝ թէ ինչպէս կարգի կրնայ դրուիլ դրամը, եւ այս մասին նախնական հնարքներն անգամ դործածելու չափ հանճար չկայ. Խաթիւր — Շէրիֆները, Խաթիւր — Հիւսնայունները, Ֆէրմաններն եւ ամէն քաղաքական արտօնագիրներն 'ի հարկէ անդործ պիտի մնային, որովհետեւ օտարին ներչնութեամբ հնարուած բաներ էին: Եւրոպայի արդի հնարից հմուտ շատ մ'արուեստագէտներ եկան դայցին, բայց մէկը չտեսանք՝ որ ինքնիրեն դործատուն մը բանեցնելու գլուխ կանդնէր\* : Օտարազգեաց ընկերութիւններ քանի մը տեղ

\* Յաւ է ըսել թէ Հայ ազգի հպատակ ժողովրդէն Տատեան նշանաւոր գերդաստանը երկրին մէջ քանի մը տեղ գործարաններ հիմնեց եւ իմաստութեամբ կը դործածէր, տարակոյս չկայ թէ մինչև հիմայ շատ ալ յառաջ տարած պիտի ըլլար: Ուրիշ քանի մը գերդաստաններ ալ երկրին սեղանաբութիւնը գէթ այն ժամանակի համար ձեռքերնին բռնած էին. տարակոյս չկայ թէ թեքուս մինչև հիմայ երկրին գրամական տնտեսութեան աւելի բարեկարգ եւ հիմնական կերպը գտնելին. սակայն, որովհետեւ բազմ տեղի կը դործէ՝ քան ապագային վրայ նախատեսութեան դադարով շինուած օրէնքները, դժբաղդարար ոչ ինչ մնաց ասկէ իր կէս դար յառաջ Հայ հպատակաց սկսածներէն: Չարմանալի բան չէ՞ որ երկրին համար սյուսը ընդհանրապէս ընդունելիք սահմանադրական բարենորոգումն ալ Հայոց ազգը տան եւ հինգ տարիէ 'ի վեր սկսած է ինք իւր համար, որպէս զի՝ որչափ որ կարելի է լաւ դործածէ այն սեղմեալ արտօնութիւնները որ ընդունած է իւր վեհապետէն: Ճշմարտիւ եւ առանց սնապարծութեան խօսելով՝ ազգ մը ահա՛ որուն կեանքը բոլորովին բարոյական է դժբաղդարար, սակայն եւրոպացւոց վարչութեան կերպը կը դործածէ, աւ

երկաթուղիներ շինեցին, բայց ոչ կառավարութիւնը եւ ոչ ժողովուրդը ընաւ չհասկցաւ՝ թէ ասոր օգուան ինչ է. ապա թէ ոչ Ասիոց կողման երկաթուղին՝ Նիկոմիդիայէն մինչեւ Պօլիս, Յովհէրէն, Եւրոսկական կողմինն ալ մայրաքաղաքին Յովհէրէնայ պարսպաց անվէն դէպ 'ի Ոսկեղջիւրը բոլորովին անօգուտ տեղը ձգուելու չէին: Այսօր եթէ երկաթուղին դործածող եւրոպացիք մէջէն դուրս ելլեն, երկրի մարդոցմէն եւ ոչ մէկը կայ՝ որ դործածել կարենայ: Վերջապէս վոխառեալ միլիտաններ զէնք եւ զրահաւորներ գնուելէ զատ ուրիշ օգտակար բանի մը ընաւ չգործածուեցան. կայսրութեան խաղաղ ժամանակները բարիք մը չեղան երկրին. ուստի 1875 հոկտեմբեր ամսոյ մէջ դժբաղդարար տոկոսները չկարել վճարելու տխուր թուականին հասանք, յորում երկրին վարկը կտարեցաւ բոլորովին, եւ մէկէն 'ի մէկ 1853 էն մինչև 1876 թուականը մէկ սեւ գծով մը՝ Ռուսը մեր դէմ բանակեցաւ: Քաղաքագէտներ կան եւրոպայի՝ որ կը զարմանան այս ամենուն վրայ, եւ Թուրքիոյ դէմ թշնամանքներ կը տեղան. այո, մենք ալ դիտենք՝ թէ եւրոպացւոց չափ մարդավարի եւ անոնց չափ ընկերական չենք. բայց ասկէ չկրնար հետեւիլ թէ Թուրքիա օրհասական հիւանդ կամ անկեալ է, որովհետեւ ինչպէս իւր մոլութիւնները՝ նոյնպէս ալ առջի իւր հին լաւ հանդամանքները պահած է:

Օսմանեան կայսրութեան յետագէմ վիճակը եւ Եւրոպայի ազգաց յառաջադիմութիւններն իրարու հետ անբաղդատելի են. եւ թշնամիք մէկմէկ առթով հետդնեալ երկիրներ առին ձեռքէն. Խրիմն առին (1779)

ուանց անոր օրինակը տեսնելու իւր հաւասար հպատակաց, Յունաց, Պուլկարաց եւ այլոց վրայ, եւ առանց որ եւ է ազգեցութիւն մը երես օժանդակ ունենալու իւր աշխարհէ քաղաքակաշուութիւնէն:



եւ (1784) Կ. Պօլսոյ դաշնադրութեամբ, Պետարապիա (1812) Պուրքէշի, եւ վերջապէս Յունաստանը (1832) Լոնտրայի դաշնադրութեամբ: Այս միջոցին Սերուիա Կրան անդղակի հրամանին ներքեւ հպատակ իշխանութիւն մ'էր. Ռուսմանիոյ Պէյութիւնները զգացին թէ իրենց հին արտօնութիւններն ընդարձակելու համար հետզհետէ Ռուսիոյ քաղաքականութեան շրջանակին մէջ մտնելու են. վերջապէս բոլորէն հեռանալէ աչքով նայել տալու երեւոյթները շատցան Թուրքիոյ վրայ. ինչու որ միջին դարէ եւ այսր ազէկ վարչութիւն չունեցաւ, ճարտարութիւնք եւ արուեստք չձողկեցան, հաղորդակցութեան ճամբայները հին գիրքով բարբարոսական վիճակի մէջ մնացին եւ երկրին մէջ ցեղի եւ կրօնքի ասելութիւնները սաստկացան: Այնպէս զիտոնները իրաւունք ունէին կերպով մը, որովհետեւ անշարժութիւն եւ կործանումն հոմանիշ բառեր են պետութեանց համար: Եւրոպա տեսնելով որ իւր հաւասարակշռութիւնը կորսնցունելու վտանգը ծանրապէս սպառնալ սկսաւ, Թուրքիոյ ամբողջութիւնը պահելու ինդիքը ձեռք առաւ, ոչ թէ վճռական որոշում մը ունենալով մտաց մէջ, այլ դէպքին համակերպելով՝ այսինքն մերթ Թուրքիա իւր բաղդին յանձնելով եւ մերթ ժամանակին քաղաքականութեան հարկաւոր հետեւանքին անսալով:

Ռուսիա եւրոպացիներուն Թուրքիոյ վիճակին վորայ ընդհանրապէս յուզուիլն զգալուն պէս՝ կանուխէն սգուտ քաղելու համար հետզհետէ Սուլթաններուն ձեռքէն երկիր գրաւելու քաղաքականութիւնը ձեռք առաւ. սահմանը առաջ Տնիէսիէր քէնց, յետոյ Գրուիթ, եւ միանգամայն Մոլտո—Վալաքի մէջ ունեցած հզօր ազդեցութեամբ Կրան բարոյական իշխանութիւնը մընչեւ Կանուք աստիճան առ աստիճան սպառեց. Կանուքի աջ եղերքն ալ ստիպեց Սերուիոյ թողով՝ որ արդէն ինքնօրէն կը կանաւարուէր: Յունաց ապրտամբութեան ժամանակ եւրոպացիք ալ Ռուսաց այս մի եւ նոյն հնարքը ի գործ դրին. կայսրութեան

ձեռքէն խլեցին Մոտա, եւ Լեփանթի ծոցոյն անմիջական եղերքները գտնուած նահանգները, Ակարնանիա, Փովկիս, Բէուլտիա եւ Ատտիկէի թերակղզին: Այս անդամատութիւններէն ետքը Եւրոպա արթնցաւ, դրութիւնը փոխեց, եւ կարծես ուխտեց այլ եւս Թուրքիոյ սահմանը չսեղմել: Թուրքիոյ ամբողջութեան խնդիրը կերպ մը քաղաքականութիւն դարձաւ. Ռուսիա անգամ այս կերպն ընդունեց. որովհետեւ 1829 թուականին՝ երբոր մինչեւ Անգրիանուպօլիս եկաւ, Գոնէն ուրիշ բան չսպահանջեց՝ այլ Սեւ ծովու արեւելեան սահմանը գտնուած ամբութիւնները միայն. 1834 ին ալ Սիլիստրէ առժամանակեայ կերպով միայն գրաւեց: Կեսելլոտ կոմսը քաղաքականութեան այս փոփոխուածը սա խորխտաբանութեամբ բացատրեց՝ այն ատեն 1830 փետրուար 12 թուականաւ գրած մէկ նամակին մէջ. — Կայսեր ուրիշ բան մնացած չէ, այլ միայն Օսմանեան պետութիւնը կործանել —: Թերեւս չափազանցութիւն էր այս ըսածը. սակայն նոյն նամակին մէջ կը յաւելու թէ — Կրան այս տկարացեալ վիճակը՝ յորում է ըստ դաշնագրութեան Անգրիանուպօլսի, աւելի կը յարմարի Ռուսիոյ քաղաքական եւ վաճառականական շահուցը՝ քան ուրիշ կերպը —: Ըսել է՝ թէ Արեւելքի վրայ մերհնաշուքիւններ խաղալու ոճը սկսած էր փոխուել: Գաղղիա 1840 թուականին ուրիշ աւելի նոր եւ մտքէ չանցած դաղափար մը ձեռք առաւ. Մէհէմէտ Ալիի սպստամբութեան օրնեց, ըսել է Տաճիկ—Արարական տարրը գուտ Տաճկականին դէմ հանեց. իսկամը իսլամով կերպարանափոխել, կամ կերպ մը քաղաքացիտական նամաարուժութիւն ընել ուզեց: Գաղղիոյ այս փորձն անյաջող ելաւ, մանաւանդ թէ Լոնտրայի դաշնադրութեամբ բոլոր միւս պետութիւնք իրեն դէմ համախմբեցան: Ուստի պէտք էր՝ ուրիշ դրութիւն ձեռք առնուել: Փարիզի 1856 թուականի դաշնադրութիւնը եւ անոր հետեւական քաղաքականութիւնը



խնդիրն ուրիշ տեսութեամբ դիտեց . այս դարու պե-  
տական մարդիկ եւ վաճառականք համոզուելով՝ թէ  
կակուղ միջոցներ ձեռք առնուելու են , երկու նպա-  
տակ գործածեցին . մէկ կողմանէ ուղեցին քրիստոնեայ-  
ները չափով մը գոհացունել՝ Սերուիոյ , Մուտավիոյ եւ  
Վալազի հպատակ պէյութիւնները հաստատելով , միւս  
կողմանէ ալ խաթիւր — Հիւմայունով մը մնացած հը-  
պատակները բարեկարգել . այս կերպով յուսացին  
Եւրոպայի քաղաքակրթութեան սկզբունքները կայս-  
րութեան մէջ մտցունել , ըսել է ուղեցին՝ որ արեւ-  
մտեան ժողովրդոց օրէնքներն ու սովորութիւնները  
փոխ տալով՝ թուրքիա իւր ուղելովը վերակենդանա-  
ցունեն . բայց այս փորձն ալ անյաջող ելաւ : Մէկ  
կողմանէ Մոլոտո—Վալազի պէյութիւնները , ընդդէմ  
Եւրոպայի վճռոյն , իրական հպատակութիւնը նետել  
եւ անուանականը միայն ունենալ ուղեցին , եւ ամէն  
ջանք ըրին՝ որ արտօնութիւննին աւելցունեն , եւ առ  
փոքր փոքր գրեթէ կատարեալ անկախութեան հա-  
սան . առաջ Եւրոպա հաճեցուցին՝ որ մէկ իշխանու-  
թեան մէջ ժողովուին , յետոյ օտարազգի իշխան մը  
առին , վերջն ալ Ռումանիա տիտղոսը եւ վերջապէս  
ինք իրենց յատուկ եւ ինքնիշխան դիւանապետութիւ-  
նը . հարկ միայն կուտան Գրան , եւ անկարեւոր իւ-  
թերու մէջ Գրան հրամանին կ'սպասեն : Սերուիա ալ  
նոյն ճամբայն բռնեց . Օսմանեան զօրքերը պարտաւո-  
րեց 1866 թուականին իրենց ամրոցներէն դուրս հա-  
նել , ինքնիրեն սահմանադրութիւն հաստատեց առանց  
Գրան կանխաւ հաճութեանը . հիմայ ալ այս տողերը  
գրած ատեննիս պատերազմի բռնուած են :

Վերանորոգումներն իրենց ուղիղ արդիւնքը չունե-  
ցան . 1836 ի խաթիւր — Հիւմայունը բնաւ տարրեր  
գործնական մը չունեցաւ 1840 թուականի խաթիւր—  
Շէրիֆէն . երկոցուն գլխաւոր արամադրութիւններն եւ  
Եւրոպացւոց ստիպելովը հրամայուած բարեկարգու-  
թեան որ եւ է օրէնքները քիչ փոքր մնացին . ուրիշ

արդիւնք չունեցան , այլ միայն մահմետականութիւնը  
գրգռել եւ սաստկապէս թշնամացնել քրիստոնէու-  
թեան . քրիստոնեայք ալ ի փորձոյ տեսնելով՝ որ եւ-  
րոպացւոց գործածած միջոցներն աւելի անհանդիստ ըրին  
զիրենք քան թէ բարիք բերին , կ'անիծեն գործածուած  
քաղաքականութիւնը , եւրոպացիք ալ կը կարծեն թէ՝  
Թուրքիոյ քրիստոնեայք երախտազխութիւն կ'զգան  
դէպ առ իրենք : Ըսել չենք ուղեր թէ բարենորոգումներ  
ընելն անկարելի է , քան լիցի . մանաւանդ թէ այսօր  
ասկէ ուրիշ հնարք չկայ , ինչպէս պիտի տեսնուի ,  
եւ ասկէ ուրիշ սր եւ է ընելիք մը չկրնար ու-  
նենալ եւրոպացին ալ . միայն սա ստոյգ է՝ որ տակա-  
ւին բարենորոգման հաստատուն ձեւը չէ կրցած գրա-  
նուել , եւ ապագային մէջ խնդիրն արմատէն հանե-  
լու հարկաւոր եղանակը տակաւին միտք եկած չէ :

Շատ մը միջոցներ զոր Եւրոպա գործածեց խնդի-  
րը լուծելու համար , ի պատմութենէ չարեցինք , եւ  
ինչպէս տեսանք՝ բոլորն ալ անբաւական էին : Քայ-  
նարձքի դաշնադրութենէն մինչեւ այսօր գրեթէ մի  
եւ նոյն է խնդիրը : Հիմայ ալ անոր վրայ խօսելու ենք՝  
թէ արդեօք ասկէ վերջը կարելի է լուծել խնդիրը :  
Առջեւնիս փորձեր ունեցանք՝ թէ մինչեւ այսօր ձեռք  
առնուած միջոցները անբաւական , վտանգաւոր եւ ան-  
պտուղ էին , բայց խնդիրն ալ ասկէ աւելի ճնշուած  
ժամանակ ունեցած չէ : Ի՞նչ ընել պէտք է ուրեմն :  
Թէպէտ եւ դէպքերը շատ անգամ հրաշայի անհա՛րե-  
րութիւններ ունին , եւ իրաց կերպարանքը յայնժամ  
գաղափարաց յուզման կը յաղթէ , բայց ասիկա բացա-  
ռիկ յաջողուած է , որ անշուշտ մարդ հաշուի տակ  
առնելու է . այսու հանդերձ հարկ է առնենէն աւելի  
սա բանին ուշադրութիւն ընել թէ սովորական կար-  
գով պարագայները եզրակացութիւն մը գոյացնելու  
համար դեռ ինչ վիճակի մէջ են :



Գ.

Կարծեմ չպահանջուիք մեզնէ՝ որ ճշմարտանմանե-  
րու վրայ ընենք իմաստասիրութիւննիս . բռնութեան  
եւ յանդգնութեան հարուածները վերլուծութեան կամ  
հետաքննութեան տակ չեն իյնար : Այս ենթադրու-  
թեամբ երբոր կը տեսնենք՝ որ պետական դիւանները  
դեռ թանձր մթութեան մէջ կը մաքառին , կրնանք  
հաւատալ թէ արեւելեան խնդրոյն լուծման ժամանա-  
կըն եկած է : Կարծեմ՝ երբոր այս բանին ժամանակը  
մօտենայ , լուծման եղանակն ալ պայծառ պիտի երեւի  
պատմութեան մեծ գործաւորները , քաղաքագէտք ,  
յայտնի ճշմարտութիւնները գործի կը դնեն , եւ միայն  
այն ատեն կ'երեւին՝ երբ ժամանակն եւ եղելութիւնք  
ազգաց առջեւ ելած խնդիրները հատուկացուցած  
կըլլան :

Եթէ ու չադրութեամբ քննենք Եւրոպիոյ եւ Թուր-  
քիոյ արդի վիճակը , պիտի կրնանք ըսել՝ թէ արեւել-  
քի խնդիրը վճռաբար լուծելու համար դիւանագիտու-  
թեան գործելու ժամանակն եկած հասած է : Անշուշտ  
տարակուսելի է : Եւրոպա եւ Թուրքիա միանգամայն  
սոճնելու ենք մեր դիտողութեան մէջ , որովհետեւ այս  
բանին մէջ պետական դիւանները միայն մէկ պետու-  
թեան վրայ խորհելու չեն , այլ բոլորին վրայ առ հա-  
սարակ , Վէճ ընել կարելի չէ , ըսած է անդդիացի  
նշանաւոր պաշտօնեայ մը , այնպիսի մարդոց հետ՝ որ  
չեն հասկնար թէ Օսմանեան կայսրութիւնն ապահո-  
վելը Անդղիոյ համար կենաց եւ մահու խնդիր է : Այս  
կարծիքը թերեւս չափազանցութիւն ըլլայ . բայց ա-  
ւելի ճիշդ է ըսել թէ չէ կարելի վէճ ընել այնպի-  
սեաց հետ՝ որ չգիտեն՝ թէ մինչեւ որ պետութեանց

իրարու ակնածելի եղած դիրքը հիմնապէս չկերպաւո-  
րի , եւ հետեւապէս մինչեւ որ բովանդակ Եւրոպիոյ  
չէնքին վրայ հարուած դալու կասկածը չփարատի ,  
Օսմանեան կայսրութիւնը պահելու արդի քաղաքակա-  
նութեան հակառակ քաղաքականութիւն երբեք ձեռք  
չառնուիր , եւ արդի եւրոպական միասնականութիւնը  
չանջատիր : Բայց եթէ լւրաքանչիւր երկրի դիրքը  
ուրոյն ուրոյն նկատենք , ամենուն համար ալ պիտի  
համոզուինք՝ թէ ամենքն ալ , ըստ առանձին աստի-  
ճանաց , հիմակու հիմայ Արեւելքի վրայ արմատական  
փոփոխութիւն չըլլալէն չաճ ունին , ինչպէս պիտի  
բացատրենք :

Գաղղիա 1870 թուականի աղետալի պատերազ-  
մէն 'ի վեր ինքզինք քաշած առանձինն կ'աշխատի .  
ցաւալի փորձառութիւնը ազգային ընդհանուր զգացու-  
մը կրթեց՝ թէ ոչ եւս նետուելու է Եւրոպայի վրայ  
ոչ արեւելու եւ ոչ վրէժխնդրութեան համար : Բայց  
եւ այնպէս որչափ որ իւր առջի ամբարտաւանութիւ-  
նն խոնարհեցաւ , ընդհանուր հաւասարակշռութեան  
մէջ իւր դիրքը պահելու պատիւը չկրնար թողուլ .  
յայտն յոյն իսկ իւր ոսոխին , Գերմանիոյ , ստուգադէտ  
մտօք զիտած շահերն անգամ համաձայն են : Գաղղի-  
ոյ համար անհնար է՝ որ արտաքին մեծ իրարանցում մը  
փնտասկար չըլլայ , որովհետեւ նորա խաղաղ վերակազ-  
մութեան պիտի դպչի Ասիէց զատ , կամ այս դէպքերուն  
մէջ Գաղղիա ալ պիտի մտնէ , կամ վտանգաւոր ձեռ-  
նարկութեան մէջ պիտի նետուի եւ կամ պիտի համբե-  
րէ չմիջամտելու , եւ թոյլ պիտի տայ՝ որ Արեւելքի  
մէջ առանց իրեն կատարուի ամէն բան : Բայց սա-  
կայն եթէ գաղղիացին անտարբեր կը մնայ՝ ուրիշները  
զինքը դուրս թողուն իրենց շահաւոր չպիտի համա-  
րին : Գաղղիոյ պէս մեծ ազգի մ' ալ իրեն ժամանակա-  
կից մեծ խնդրոյն մէջ բնաւ ազդեցութիւն մը չունե-  
նալը ազէկ հետեւանք չունենար :

Աւստրիացին աւելի կը փափաքի՝ որ Արեւելքի մէջ  
խաղաղութիւնը պահպանուի , եթէ իրողութիւնք վրճ-





ոսքար որոշուին եւ կամ Օսմանեան կայսրութիւնը յօ-  
 շտուով, ինք ալ շատ տխուր փոփոխութեան մէջ պի-  
 տի ինչայ, կամ Ռուսին եւ Սլաւ իշխանութեանց կա-  
 մայ ակամայ թոյլ պիտի տայ որ իրենց հարաւային  
 սահմանները հաստատուին, եւ կեդրոնական վտան-  
 գաւոր ձգողութիւն մը հիմնեն՝ բոլոր համացեղ Սլաւ-  
 ութիւնը իրենց վրայ ժողովելու: ապա թէ ոչ երկիր  
 բաժնելու գործողութեան մէջ ինք ալ պիտի մտնէ եւ  
 Պոսնիա եւ Հերսէկ գրաւելու պիտի ելլէ: Այն ատեն  
 իւր միապետական կայսրութեան մէջ Սլաւ տարերբը  
 զգալապէս աճելով՝ բռնի պիտի պառակտի արդի եր-  
 փոստիւնը, յորոյ վերայ այսօր կայսրութիւնը հաստա-  
 տեալ է: Պոսնիայի Չեհքերը եւ հարաւոյ Սլաւք ար-  
 դէն իսկ համակրութիւն չունին Աւստրիոյ կայսրութեան  
 վրայ, ցաւելով որ իրենց ազգային ստուար թիւը բա-  
 նի տեղ չգրուիր, եւ իրենցմէ շատ քիչ բաղմութիւն  
 ունեցող ցեղեր կան՝ որ քան զիրենք մեծ կարեւորու-  
 թիւն ունին: Այս երկու ութիւնը չկրնար յերկար տեւել՝  
 եթէ սլաւական նոր նահանգներ միանալով՝ երրորդ  
 տոհմ մը ձեւացունելու հակամէտ եղողներն անակըն-  
 կալ զօրութիւն մը, կամ աւելի ճիշդ է ըսել, անհերքե-  
 լի իրաւունք մը ձեռք բերեն: Ռուսի հարկ կըլլայ  
 կամ ներքին չարաշուք կռուոյ դուռն բանալ, կամ ու-  
 րիշ երրորդ վտանգի մը մէջ նետուիլ անկարելի երբ-  
 քան մը հիմնելով գերմանացիներէ, հունգարա-  
 ցիներէ եւ սլաւներէ միացեալ, եւ կամ վերջապէս  
 դժուարին դաշնակցութիւն մը գոյացնել՝ որուն կամ  
 տեւելը տարակուսելի է եւ կամ ինչ կերպ ըլլալիքը  
 բողոքովին անյայտ: Ո՞վ չգիտէր՝ թէ այն ատեն ասոնց  
 միասակար բաղկացումը յանկարծ վտանգաւոր պիտի  
 ըլլայ Հունգարիոյ, զի ազդեցութիւննին զգալի կեր-  
 պով պիտի կոտորի, եւ Գերմանացիք ալ կայսրութեան  
 բաժանեալ զօրութեան մէջ իրենց մասը քիչնալով,  
 պիտի ընկղմին Հոնէնցոյերներուն գաւազանին տակ  
 ժողովուած համացեղ եւ նոյնալեզու ժողովրդեան մէջ:  
 Թուրքիոյ կայսրութիւնը պահելը Անգղիոյ սուր-

ջին շահն է: Բրիտանիոյ պետական մարդիկ որչափ  
 ուրիշ կողմանէ անհամաձայն ըլլան իրարու՝ այս կէտիս  
 վրայ բնաւ չեն կրնար անհամաձայն ըլլալ: Միացեալ  
 պետութեան Արեւելքի հետ ունեցած անչափ տուր-  
 եւտուր, Հնդկաց հետ հաղորդակցութիւնը՝ շատ դժու-  
 արութեամբ կրնայ ընդունիլ արդի վիճակին վրայ  
 ըլլալիք փոփոխութիւնը: Ինչ կերպով ալ ըլլայ՝ Թուր-  
 քիա քայքայելով՝ միշտ Սլաւ ցեղը Արեւելքի մէջ պի-  
 տի զօրանայ, եւ ասկէջ երկրական կամ քաղաքական  
 ինչ ձեւակերպութիւն ալ յառաջ գայ՝ Հնդկաց կայս-  
 րուհին միշտ անհանդիստ պիտի ըլլայ՝ տեսնելով որ  
 իւր ազդեցութիւնէն աւելի ուրիշ զօրաւոր ազդեցութիւն  
 պիտի գործէ Եւրոպիոյ արեւելեան կողմը, եւ կեդրո-  
 նական Ասիոյ մէջ գտնուած երկիրներուն եւ ծովե-  
 րուն վրայ: Աստանգնուպօլիսը բանալի մ'է, ինչ-  
 պէս ըսաւ Նաքոյէոն առաջին, շատ մը ուրիշ գոներ  
 ալ կը բանայ դէպ 'ի Ասիա, դէպ 'ի Սեւ ծով եւ դէպ  
 'ի Միջերկրականը, որ նոյն է ըսել դէպ 'ի Բրիտանիոյ  
 բացէ 'ի բաց գործ ըրած ասպարէզները, եւ որ օր որ  
 այս բանալին զօրաւոր թշնամոյ ձեռք անցնի, ո՞վ  
 գիտէ՝ թէ չպիտի գոցէ: Անգղիոյ վտանգին ծանրու-  
 թիւնը քիչ մը չտիւտորեալ ըլլայ ըսենք, Սիւէիշի ջը-  
 րանցքը գրեթէ գնած ըլլալուն համար, եւ թերեւս  
 քաղաքակրթեալ աշխարհաց մէջ հետզհետէ վաճառա-  
 կանութիւնը ազատ վիճակ մ'ստանալով կասկածուած  
 վտանգը կերպով մը թեթեւցունէ: բայց ինչ դժուար  
 բան, կախումն ունենալ այնպիսի պետութեան՝ որ չը  
 գիտես ինչ վիճակ պիտի ունենայ, եւ ո՞վ գիտէ թէ  
 բարեմիտ եւ հաստատամիտ պիտի ըլլայ մինչեւ վեր-  
 ջը: Ռուսի բրիտանական հեռատեսութիւնը կարելի  
 բան չէ՝ որ Օսմանեան կայսրութեան քայքայումը ա-  
 ռանց պատերազմի ընդունի: Անգղիացիք Թուրքիոյ  
 համակրութիւն ունին ըսուածն այս է:  
 Խոսալիա, որ Եւրոպիոյ մեծ պետութեանց համա-  
 խմբին մէջ դեռ նոր ոտք կոխեց, Արեւելքի գործոց  
 մէջ ինչ դեր խաղալիքը պայծառապէս որոշելու դեռ



ժամանակ չունեցաւ . բայց Արեւելքի մէջ վաճառանկանութիւնն ընդարձակելու մեծ միտումն ունի , եւ չիրնար իւր դիտաւորութեան հակառակ որ եւ է փոփոխուած անտարբերութեամբ ընդունիլ : Թուրքիա այս վիճակին մէջ մնալով նշանաւոր հարստութեան հիմեր պիտի կրնայ դնել այնպիսի աշխարհի մէջ՝ ուր իւր ազգէն բաւական բաղմութիւն կայ , իւր լեզուն տարածուած է , իրեն ճարտարութեանցն համար շատ մ'ազատ եւ զիւրին ճանապարհներ կրնայ դանել : Եթէ այս դիրքը փոխուի , տարակոյս չկայ՝ որ երբ միւս տէրութիւնք միշտ իրարու դէմ դէն 'ի ձեռքն գտնուին , ինք ալ պիտի պարտաւորի իւր զինուորութիւնն ընդարձակել . եւ արդէն ծանրացած ծախքերն աւելի եւս ծանրացունել , որոց չպիտի կրնայ զիմանալ՝ ինչպէս կը ցուցնէ հիմակուան վիճակը :

Գերմանիա եւ Ռուսիա կը մնան , Առաջին կամ վեր 'ի վերոյ հայեցուածով անանկ կերելի՝ թէ Գերմանիա պատերազմի թատրէն հետի գիրք մ'ունենալով՝ Արեւելքի մէջ յուզեալ խնդիրներուն վրայ ամէն անգամ անտարբեր աչքով պիտի նայի : Բայց երբ իրողութիւնք մօտէն զննենք , պիտի տեսնուի՝ որ Ռուսիան կայսրութեան վրասը զինքն ալ սոսկալի ապագայի առջեւ պիտի հանէ : Պերլինի համար Համապաւուրթեան տարածումը ցուրտ արեամբ չէ կարելի դիտել . եւ որ մ'երբ Գերմանականութիւնը՝ որ Պրզմարգայ քաղաքականութեան արդիւնքն է , սլաւական հսկայ ազգի մը հետ խաղալու արկածներուն տակ ինչայ , որ մը՝ երբ Գերմանիոյ հողերուն սահմանը Պալթիկէն մինչեւ Մարմարայի ծովը անկղ հսկայ մը արձանանայ , Գերմանիա ոչ չարժեքու ազատութիւն պիտի ունենայ եւ ոչ եւրոպական զօրեղութիւնը պահել պիտի կըրնայ : Աւստրիա եւ Հունգարիա Թուրքիոյ փտանդաւ եւ Ալաւաց բարգաւաճելովք քակուելուն յար եւ նմանը՝ Գերմանիա ալ պիտի քայքայի . Հասպուրիկի (Սուր-

արիոյ) միապետութենէն կորզած գերմանական նահանգները՝ որ դեռ կատարեալ յօդաւորութիւն մը զըտած չեն , անտարակոյս փոխանակ օգտակար ըլլալու՝ վրասակար պիտի ըլլան : Պետութիւն մը որչափ ընդարձակի , այնչափ իւր պառակտումը կը մօտեցունէ , մանաւանդ երբոր իրեն սահմանակից թշնամի ունենայ . եւ ես կը կարծեմ՝ թէ այն նահանգները՝ որ այսօր այնքան կատարեալ կերպով միացած չեն , չպիտի կրնան Գերմանիոյ մտահաճութեան ըստ ամենայնի համակերպելով՝ միշտ ձակատիլ Բեթրսպուրիկի իշխանութեան կամ կառավարութեան ներքեւ միացեալ Ալաւ ցեղերու դէմ : Ասիկէջ Գերմանիոյ վիճակը խանդարուելով՝ չպիտի կրնայ ազատիլ ուրիշ կերպով՝ բայց միայն դէպ 'ի հիւսիս եւ Պալթիկի նահանգները կամ ուրիշ ծովեղերեայ երկիրներ տարածուելով : Բայց ստիկա զիւրին բան է . որչափ սոսկալի պատերազմներ ընել հարկ պիտի ըլլայ , եւ ո՛վ դիտէ թէ այնչափ աշխատութեամբ եւ այնչափ պատերազմաւ ձեռք բերած շահերն ալ ձեռքէ հանել պիտի չստիպուի : Անտարակոյս այս հեռաւորութիւնները կընախատեսեն Պերլինի կառավարութեան զլուխները . հիմայ Ռուսիա եւ Բրուսիա կամ Գերմանիա համակրութիւն ունին իրարու , դաշնակից էին կանտոնէն , ընտանեկան կապ ալ ունին մէջերնին , բայց շահուցներհակութիւնը ասոնց ամենն ալ կը ջնջէ : Գերմանիա առ հասարակ հանգիստ պէտք է ըլլայ՝ որ զանազան մտանց միացումը ամբանայ եւ իրեն զինուց վերջին յաջողութեան արդիւնքն է . ապա թէ ոչ յիմար եւ ամբարտաւան էին ուրեմն այն անյուսալի յաղթանակները՝ որ տարաւ 'ի դարմացումն աշխարհի , սակայն չմօտէր պահպանել : Գաղղիացւոց ըսածին պէս , շատ մը միլիտաններու աշխարհակալութիւնը բաւական չէ , իմաստուն եւ դժուարին բանը՝ իւր մէջէն միլիտաններ հանելն է . բայց առանց խաղաղութեան կարելի է այդ :



Գանձ Ռուսիոյ : Արեւելքի իրաց խորը երթալու ժամանակն եկած է արդեօք Ռուսիոյ համար : Այս ալ տարակուսելի է . եւ թէպէտ միշտ ինքն է ինդիերն յուզողը , բայց դեռ վարանմանէ անդին անցած չէ . Գրան հետ յաջող ճակատամարտներ մղելով շահած դաշինքները իրեն մեծ օգուտ մ'ըրած չեն , աւելի Գրան կառավարութեան խորհրդոց մէջ ազդեցութիւն չանել ուզած է քան թէ երկիրներ գրաւել , Գար մը ամբողջ պատերազմելով Խրիմն եւ Պեսարապիա միայն առած է . Պուքրէշի գաշնադրութենէ 'ի վեր (1812) փրուտ գետը երկու կայսրութեան սահման մնացած է . եւ Ռուսիոյ յառաջադիմութիւնը , ճիշդը խօսելով աւելի բարոյական աշխարհակալութիւն եղած է : Ո՛չ ապաքէն այս վիճակը կապացուցանէ՝ թէ Ռուսիոյ պէս հպարտ կայսրութեան մը համար Թուրքիան գրաւելու կիրքն սոյնչափ չէ՝ որչափ կ'ենթադրուի սովորաբար . այլ դժուարութիւնները նկատելով՝ վճռական պատերազմի մասնելէն կը վախնայ , Գիցուք՝ թէ կրցաւ յաղթել . բայց ինչպէս պիտի կրնայ յաղթանակը պահել : Յաղթանակներն կարծուածին չափ կատարեալ չեն կրցած ըլլալ . օրինակ մը ապու համար , Նիկոպոսոս կայսրը մինչեւ Անդրիանուպօլիս հազիւ հազ ինկաւ ծիրեալ բանակով եւ առաջ չկրցաւ երթալ . ստիպուեցաւ այնպիսի խաղաղութիւն մ'ընել՝ որ պարտելոյն աւելի շահաւոր էր՝ քան պարտողին : Գրան վայրապար երկիւզն էր՝ որ Ռուսիոյ միջոց տուաւ իւր մեծավտանդ դիրքէն խալտելու : Եթէ Տէվանը ընդդիմանար , տարակոյս չկայ՝ թէ Ռուսիոյ ամէն յաջողութիւնները պիտի ոչնչանային : Այսօր ալ եթէ պատերազմի , անշուշտ վտանգը առաջին ժամանակի պատերազմներէն թեթեւ պիտի չըլլայ . գրամ ակտք է գըտնել՝ որ չունի . եւ եթէ գտնէ եւ 'ի սկզբան յաջողութիւններ ալ ձեռք բերէ , պատերազմը ծանրագնի շարունակելու է՝ որ կարենայ Թուրքիոյ ժողովրդեան յուսահատական եւ զայրադին դիմադրութիւնը վանել . բայց որչափ մարդ եւ որչափ զօրք վատնելու է , որ

Պօլսոյ չըջապատը դայ . որովհետեւ իւր դէմ՝ պիտի գտնէ ոչ միայն Թուրքիոյ զօրութիւնը՝ այլ եւ Անգլիոյ օգնական բանակները : Յեծին Բրիտանիոյ նաւատորմին եւ զօրքը չքացնելով ներս մանել՝ ինչ անհաւատալի գործ : Ներկայ ըլլալիքն այս է . բայց , ճն , ընդունինք՝ թէ կատարելապէս յաղթեց . տակաւին ինչ անել պարագայներ կան . թշնամի եւ անհաշտ տարերքի , Թուրքաց , հետ պիտի բաղկանայ , անկախութիւն ուղող հարաւային սլաւաց պիտի դիմադրէ , որոնք հիմակուրնէ վստահութիւն չունին վրան , եւ սրչափ ծանր պիտի դայ իւր յաղթութեանց հետեւանքին զանոնք հնազանդեցունելը : Ասկէց զատ , տարակոյս չկայ՝ թէ Գերմանիայի ծանր պիտի նստի այսչափ ընդարձակ կայսրութեան մը գրացին ըլլալը : Ռուսիա թերեւս մէկ կողմանէ շահի միւս կողմէն կորսնցունէ , Սեւ ծովն առնելու համար Պալթիկը վրայ տօյ , բայց չգիտեմ՝ թէ երկուքն ալ այս վտիոխութենէն գոհ պիտի ըլլան : Համասլաւութիւն մը պիտի կենայ՝ զոր Ռուսաց Ձարերը չպիտի կրնան միշտ իրենց հաճոյցի ծանայեցունել . Գերմանացիք ալ պիտի ջանան իրենց հետ միացունել ու թերեւս պիտի յաջողին : Բեթրսպուրկէն Կոստանդնուպօլիսը կառավարել դիւրին բան չէ . եւ շատ ճշմարիտ է՝ թէ այս առթիւ հարաւային Սլաւք ստակալի կերպով պիտի թշնամանան հիւսիսայնոց , եւ իրարմէ շատ հեռի ցրուած երկիրներուն մէջ քաղաքական միութիւն չը պիտի կրնան հիմնել : Ռուսիա գիտէ ասոնք . անոր համար է՝ որ յառաջուց 'ի վեր անստոյգ դիրք մը բռնած է , եւ կաշխատի աւելի ազդեցութիւնը յաւելցունել , քան աշխարհակալել , եւ ազգերն իրեն հակեցունել քան կլանել . աւելի կուզէ աշխատցունել , չարչարել եւ մաշեցնել այն երկիրը՝ զոր հիւանդ կը կարծէ , որմէն թերեւս օր մը , ո՞վ գիտէ , բաղդ մ'ելլէ իրեն , քան թէ վերջին եւ բոլոր զօրութեամբ վրան յարձակիլ . եւ եթէ շատ անգամ աշխարհք զարմացել է իրեն բարեխառնութեան վրայ , պատճառն այն է՝ որ ամէն անգամ ալ ստիպուեր է



ձեռքէ չձգել , եւ յաւիտեան ալ չպիտի կրնայ :

Գ.

Մինչեւ հիմայ ըսածներէս կը հետեւի՝ թէ իւրաքանչիւր եւրոպական պետութիւն ստուգիւ Արեւելքի վտանգին ընաւ չփափագիր , եւ ամենայն իմաստութեամբ ամէն ջանք պիտի ընէ խնդրոյն լուծուիլ ուրիշ ժամանակի ձգելու : Եթէ եւրոպական Թուրքիոյ ներքին վիճակը աչքի առջեւ ըրենք , որ խնդրոյն մէկ հասիկ առարկայն է , պիտի տեսնենք՝ որ բաց 'ի յանդուզն եւ անխորհուրդ աշխարհակալութենէ՝ ուրիշ որ եւ է արմատական կարգադրութիւն մ' ընել հիմակուհիմայ կարելի չէ : Շատերն ինչ կանցունեն մաքերնէն կամ մէկ քրիստոնեայ պետութիւն մը դնել , կամ անկախ պէյուլթիւններէ ուրոյն կամ խառն զոյացեալ կառավարութիւն մը կանգնել , եւ կամ քանի մը նահանգ մերձաւոր պետութեանց բաժնել : Սակայն եթէ լաւ վերլուծենք այս ենթադրութիւնները , ու դրութեան տեսակները մէկդի դնելով՝ ասոնց որը տկար եւ որը զօրաւոր ըլլալը հետազօտենք , պիտի տեսնենք՝ որ ոմանք գործնականին մէջ արժէք չունին , ոմանք ալ մեծապէս վտանգաւոր են :

Անկարելի է Գանուբէն ցՊրօպրնտոս կամ Մարմարա , եւ Ադրիականէն մինչեւ Եւքսինեան Պոնտոս կամ Սեւ ծով քրիստոնեայ թաղաւոր մը դնել : Թուրքերն , այս , տիրած են այս տեղերուն եւ այսօր ալ ձեռքերնին է . բայց պատճառն այն է՝ որ եթէ բազմաթիւ չեն , որովհետեւ Եւրոպիոյ մէջ բուն Թուրքերը քիչ են , գոնէ արթուն եւ զօրաւոր են , եւ մանաւանդ տիրելու յարմարութիւն ունին բոնարար կամ խտուրթեամբ , բայց վերջապէս անդիմադրելի իշխանութեամբ : Եթէ միւս ազգերն , Սլաւ , Յոյն , Հայ , Պուլկար , Ալպանիացի , Ռուսականացի յարմարութիւն ունենային ,

արեւելեան խնդիր չէր մնար . սուրը մէկ իջուածքով դորդեան հանգոյցը պիտի կրնար խզել : Եթէ Սֆինու սպանել կարելի ըլայ՝ հանելուկ չմնար , եւ վաղը արեւելեան ուրիշ աէրութիւն մը երեւան կ'ելլէ : Բայց ասանկ չէ . ամէն ցեղ իրարու չարատես են եւ թշնամի , եւ մէջերնէն չկայ մէկը՝ որ այլոց վրայ առաւելութիւն մ' ունենայ . Թուրքերէն զատ չկայ ցեղ մ' որ՝ Պալքաններու ցամաքակղզւոյն վրայ կարող ըլլայ իշխանութիւն բանեցունել :

Անկախ իշխանութիւններ գոյացունելու դրութիւնըն աւելի եւս մոլորական է : Կ'սենք՝ թէ Սերուիոյ եւ ուրիշ երկու Ռուսական պէյուլթեանց տրուեցաւ իշխանութիւնը . բայց անդին Մովսալիա եւ Վալազիա կը մնան՝ որ վաղուց 'ի վեր քանի մը ազատութիւններ ունին , միշտ իրենց առանձին պէյեր ունեցեր են , եւ որչափ որ Գրան ազգեցութեան ներքեւ մտեր են այն օրէն՝ յորմէ հետէ իրենց ազգային իշխանը յուսահատելով Օսմանեան պետութեան հնազանդեցաւ , սակայն ընաւ Սուլթանին հպատակացը համակերպած չունին : Ասկէց զատ Սերուիա թէ եւ 'ի բազում դարուց հետէ կայսրութեան լոկ մէկ նահանգն էր , սակայն շատ ժամանակ յառաջ ինքնօրինական արստոնութիւններ ունէր , երբ Գարա — Գէորգ լեռներն ապաստանելով Տաճկաց դէմ կռուեցաւ , եւ արդիւնքը 1830 թուականին ձեռք բերուեցաւ Միլօշի վրայ իշխանութիւն հաստատող Պերաթն առնուելով : Ասանկ շարունակեալ ձգտումներ եւ անցած հինցած կարեւոր եղելութիւններ ոչ Թուրքիոյ կառավարութիւնը կրցաւ չտեսնելու դարնել եւ ոչ ալ եւրոպական զիւաններ : Ատոր համար էր՝ որ 1856 թուականի Փարիզի դաշնագրութեան ստորագրող տերութիւնք յիտուն եւ երկու տարիէ 'ի վեր ապստամբութեան ձեւ ունեցող սերվական վիճակը իբրեւ արեւելեան ընդհանուր խնդրոց մէկ մասն ընդունեցին եւ հաստատեցին : Ասկէ զատ Մօլտօ — Վալազի մէջ Տաճիկ չկար , Սերվիոյ մէջ քիչուոր էր , տեսան որ ինքիրենց կառավարուելու յար-



մար եւ նոյնացեղ ժողովուրդներ էին . Ռուսմանիացեոց իրենց իշխանն իրենք ընտրելու արտօնութիւն տուին , Սերվաց ալ իշխան ունենալ , եւ արդէն ունեցածին աւելի եւս ընդարձակեցին . Դուռն ալ եւրոպացեոց հաւանութեանը զիջանելով՝ աւելի բարեկարգութիւն ըրած կարծեց՝ քան վաղահաստատ զիրք մը վճռաբար որոշած : Այս նահանգները նաեւ կեդրոնէն շատ հեռի են . Մոլտավիա եւ Վալաքիա Դանուբին միւս կողմըն են , Սերուիա ալ բարձր լեռներով կայսրութեան միւս նահանգներէն մեկուսի է . այս պատճառաւ էր՝ որ Քայսարճըքի , Եաչի , Պուքրէշի եւ Աքքիրմանի դաշնադրութիւններով անկախութիւն տրուեցաւ Ռուսմանիոյ եւ Սերուիոյ հպատակ պէյութեանց , եւ ոչ թէ եւրոպացին ասոնց վրայ համակրութիւն ունենալով թուրքիոյ ամբողջութիւնը քայքայելը բանի տեղ չէր ներուհն համար : Պարատաղի համար ինչ որ ըսենք՝ աւելորդ պիտի ըլլայ . սա անկախ վիճակ մ'ունի , արդէն դարերէ 'ի վեր իւր եպիսկոպոսներով կամ Վլադիմիրով կը կառավարուէր , բնաւ Գրան գերիշխանութիւնը չէր ճանչեր , եւ հետեւաբար կրնանք ըսել՝ թէ բնաւ թուրքիոյ երկրական ամբողջութեան մասն եղած չէր :

Իսկ այն նահանգներուն համար՝ որոց այսօր իշխանութիւն կամ ինքնօրինութիւն տրուելու վրայ կը դառնայ խնդիրը՝ այնպէս չէ : Իսկապէս Եւրոպիոյ Օսմանեան միահեծան կայսրութեան մասն են , եւ կարելի չէ քակել՝ առանց անբժշկելի վտանգ մը բերելու նոյն կայսրութեան : Ապաքէն , Պոսնիա երկար ժամանակէ 'ի վեր մահմետականութեան դարձող Սլաւ ցեղէ պէյերու աւատական բռնութեան տակ կը գտնուի . բայց այս աւատականութիւնը՝ որ մահմետականաց ձեռքն էր , եւ 1830 թուականին բարեբաղդաբար ձեռքերէն առնուեցաւ՝ բնաւ ինքնօրինութեան կամ անկախութեան կերպ չունէր , մանաւանդ թէ աւելի ատելի էր ժողովրդեան՝ քան որչափ չէր բնաւ կոստանդնուպօլսոյ կառավարութիւնը : Պոսնիա մահմե-

տական կալուածատէր պէյերու բռնական լծոյն տակն ալ Թուրք կայսրութեան մասն էր : Միւս նահանգներուն գալով՝ միշտ Գրան կեդրոնական իշխանութեան ներքեւ էին ուղղակի :

Այլ եւ զիտողութեան արժանի է՝ թէ որչափ որ Պոսնիոյ , Հերսէկի , Պուլկարիոյ , Եպերոսի , Թեսաղիոյ եւ Մակեդոնիոյ մէջ քրիստոնեայ ժողովուրդը շատ եւ մահմետականները քիչ են , բաց եւ այնպէս մէջ ընդ մէջ իրարու խառնուած են : Այն երկրին վրայ՝ որ Պուլկարիստան ըսուիլ սկսեց , ( որ ճիշդը խօսելով յարմարութիւն չունի այնպէս կոչուելու ) , որ քիչ մը ալ Մակեդոնիայէն առնելով Անդրիանուպօլսոյ եւ Վաշուրի վիլայէթները կը կազմէ , բնակչաց իր կէս մասը գրեթէ մահմետական է . Հերսէկի մէջ մէկ երրորդ , Պոսնիոյ մէջ մէկ հինգերորդ բնակիչները կամ թուրք են կամ ուրացեալներէ սերեալ սլաւներ , եւ զանազան կրօնքով բաժանեալ ժողովուրդներ իրարու մէջ անանկ խառնուած են , եւ շահերն ալ այնչափ չփոխուած՝ որ իրարմէ հատուածիլ կամ մահմետականները մէջէն դուրս հանել կարելի բան չէ , ինչպէս եղաւ Սերուիա՝ մահմետական ժողովուրդը խիստ սակաւ եւ աննշան ըլլալուն համար : Ուրեմն 'ի հարկէ մահմետականներն իրենց տեղերը մնալու են , եւ մէկուսեղ մնալով ալ՝ ոչ լծոյ տակ կիյնան եւ ոչ քաղաքական հաւասարութեան կը յարմարին , եւ որ աւելի ուշադրութեան արժանի է , հողատէրը եւ զինուորական ծառայութեանց վարժ ու զիննալ ժողովուրդը մահմետականն է : Ասկէց զատ քրիստոնեայները պէտք եղած ուշիմութիւնն եւ արութիւն չունենալով , որովհետեւ իրենց վաղեմի ոտխալ վրայ չեն կրնար տիրել , նոր իշխանութիւններ դոյանալն անհնար պիտի ըլլայ առանց ներքին ջղային ցնցման , որուն ո՞ր դիտէ ինչ կըլլայ հետեւանքը :

Այս ալ մեծապէս կասկածելի է՝ որ այս նահանգները մէկ ուրիշ նոր կառավարութեան մը ներքեւ լո-



նան . թէ եւ աւանդական սովորութեան մը համեմատ սեղական իշխանութեանց մէջ ելումուտ ընելով քանի մը հասարակ առաւելութիւններ ունին , բայց ըստ ինքեանց քաղաքական գործարանաւորութիւն մը կազմելու հարկ եղած տարերքը չունին : Պուլկարիոյ մէջ քանի մը փաստաբաններ , վարժապետներ եւ Ռուսիոյ էկզիւզները մեծցած վերացական դադաւարով քֆէր (քահանայներ) կան , որ ազատութեան եւ ինքնօրինութեան ճառեր կորոտան եւ կը քարոզեն , բայց գործնական չունին . ընդհանրապէս ժողովուրդը ոչ կըրթուած է եւ ոչ զգայուն Վերկարատեւ գերութեան վիճակը այնչափ վատթարացուցած է զիրենք՝ որ ընդհանրապէս մահմետականաց բարձրութիւնէն բաւական ստորին հարթութեան մէջ գամուած մնայած են , զէնք բունել չգիտեն , որովհետեւ պուլկարներն ալ մեղի պէս զօրք չտալու չարաչուք բարիքը կը վայելեն , որոյ շնորհիւ կառավարութիւն գործածելու կերպը քրմագիտութեան պէս դադանիք մնացած է իրենց : Աեծ բազմութիւն են տկարներու , որք թերեւս հիմայ չէ , այլ որ մը չափազանց նեղութիւն զգալով կրնան ապրատամբիլ , բայց իրենք զիրենք չեն կրնար կառավարել : Կատարեալ անկախութիւն տալը շատ կանուխ է , դաշնակցութեան նման դրութիւն մ'ընդունիլն ալ խելքի մօտ չէ , եւ չկրնար գործածուիլ Յեղական խոր ատելութիւնն իրարու դէմ , քաղաքակրթութեան մասին ունեցած իխտ անկատար վիճակին , եւ ընաւ փորձառութիւն մը արդէն չունենալին , անտարակոյս , այնպիսի բրած է զիրենք անկախութեան . Ներուպա ալ եթէ փորձ մ'ընել ուզէ՝ այնչափ անպատեհութիւններ պիտի ելլեն իւր դէմ՝ որ բոլոր ակնկալութիւնները ոչնչացունէ :

• Մասնական բաշխումն առջի բերան այնչափ ցնորական չէ , եւ շատ մարդիկ կան՝ որ Պոսնիան Սերբիոյ , Հերսէկ ալ Գարատաղի կը կամենան , Նպիրոս եւ Թեսաղոնիկէ Յունաստանի : Այս վերջին նահանգները Յունաստանի արուելուն մէջ յիւթական անկարելի-

ութիւն չկայ , բայց նա դիտողութեան արժանի է՝ որ հելլենական թագաւորութիւնը միանալով Օսմանեան կայսրութիւնը պիտի անդամատի , որով Արեւելք եւ ընդ բովանդակ Ներուպա այնպիսի խռովութիւններ երեւան պիտի գան՝ որոց առաջին հիմակաւունէ առնուին անչուշտ դիւանադիտաց մտքէն կանցնի : Այս կարգադրութիւնը Պուլկարիոյ բնաւ չյարմարիր , որովհետեւ ոչ մէկ մերձաւոր իշխանութեան մասն չկրնար արուիլ : Կակ Սերբիոյ եւ Գարատաղի հետ Պոսնիան եւ Հերսէկը միացունին ալ չյարմարիր , որովհետեւ բաւական բազմութեամբ հողատէր , զինուորեալ եւ տիրոզ մահմետականներ առած պիտի ըլլան դիմացնին , որով իրենց յատուկ կառավարութիւնը ստեղծուան միշտ ծանր դժուարութեանց պիտի հանդիպի : Վերջապէս , ինչ զժուարութիւններ որ արդէն բացատրեցինք , ինչ կերպով ալ ըլլայ՝ հերքեն անկարելի է , Աւստրիա իւր այս աւուր դրից նայելով՝ չկրնար ընդունիլ որ իւր սահմանին վրայ եռացող սլաւութիւն մը զոյանայ , եւ իւր Աւստրիա — Հունգարական երկուութիւնը բունելը զժուարացնէ , Նահանգները մերձաւոր իշխանութեանց բաժնելու դրութիւնը , որ չյաջողիր , մշտնջենաւոր անկարգութեան եւ խռովութեան դուռն կը բանայ : Եւ եթէ բարի հետեւանք մը յառաջ պիտի դայ , որ բնաւ չյուսացուիր , մանաւանդ այն նահանգներուն համար՝ ուր մահմետականք իրօք ազդեցութիւն ունին , հարաւային սլաւ ցեղերուն տարածուիլն է , որուն դո՛ չեն կրնար ըլլալ Ռեթրուպուրկ եւ Վիէննա , իւրաքանչիւրն իւր տեսութեան համեմատ , եւ 'ի հարկէ արդելք կ'ըլլան :

Ե.

Այս խնդրոյն ամէն մէկ քայլափոխն անկոխելի դը-



ժուարութեամբ լեցուն է, բայց՝ չեն կրնար տեսնել այնպիսի մարդիկ՝ որ սովորութիւն կունենան ամէն բան թոհչքով դատելու: Մենք ամէն դժուարութիւն մի աւ մի չբացատրեցինք. եթէ մանրամասնութեան իջնէինք եւ պատմէինք, օրինակի համար, թէ Պոսնիոյ եւ Հերսէլի մէջ յունական եւ պապական կրօններ կան իրարու տեսլի, Գարատաղի սահմանագլխոց վերայ մահմետական եւ քրիստոնեայ կան՝ որ կնճռոտ մաղի պէս իրար անցած են, յոյնք պուլիարաց էպարքոսն ոգւով չափ թշնամի են, Պոսնիոյ մէջ աւատականութիւն մը կայ՝ որ եթէ տեղական ազատ բարենորոգումն սահմանուի, աւելի մահմետականը պիտի շահի քան քրիստոնեայն, պիտի տեսնուի՝ թէ անկախութիւն տալը կամ մերձաւորներու բաժնելը սրչափ անհնարին բաներ են: Այն ատեն փոխանակ պահանջելու Գիւանագիտութիւնէն՝ որ աճապարէ, պիտի պահանջենք որ աւելի եւս երկարաձգէ իւր՝ հետազօտութիւնները, ցաւելով հանդերձ որ այսօր այսչափ ճնշման ներքեւ ինկեր է, եւ լուծելու կը բռնաբարուի, մինչդեռ Սերոպիոյ վիճակը, թուրք նահանգաց զիւրքը, աշխարհի ընդհանուր շահը եւ ժողովրդոց տեղական շահերն ընդ հակառակն կը պահանջեն՝ որ օրինաւոր ակրնկալութիւններն իրենց նոյնութեան մէջ մնալով՝ առ այժմ միայն ժամանակուի լուծման ապագայն:


Սակայն, այս ստոյգ է՝ թէ արեւելեան խնդիրն որչափ որ այսօր վտանգաւոր չէ այնչափ, որ Սերոպիոս անմիջապէս հիմայ լուծելու պարտաւոր ըլլայ, գոնէ պէտք է հնարք մը գտնել՝ որ չըլլայ թէ բռնի որոշում մը վրայ գալով Սերոպիոյ հանգիստն եւ հաւասարակը՝ ռութիւնը տակն ու վրայ ըլլայ:

Շատ դիւաններ այս բանին համար կ'աշխատին, բայց դեռ ծրագիր մը չէ առաջարկուած՝ որոյ վրայ միաբանի բոլորին կամքը: Մէջ տեղ դրուած գլխաւոր բարեկարգութիւնը սա բայերուն մէջն է. այսօր

Պոսնիոյ, Հերսէլի եւ Պաւլարիոյ վարչական ընդհանրանալիքն ու Սերոպիոյ թուրքիոյ վտանգը չմեծնալու համար այս հնարքը օրինաւոր կը համարի այսօր: Բայց այս ալ անհնարին դժուարութիւններ ունի, եւ չյուսացուիր՝ թէ յայտ պիտի միաբանին ամէն կառավարութիւնք. մինչեւ այսօր ինքնօրինութիւն բառն ալ անորոշ մնացած է, եւ ամէն կառավարութիւն մէկ մէկ կերպ կը հասկնայ. ունք յառաջադիմական բարենորոգումն, եւ հարստահարուող ժողովրդեան փափաքը կատարելու համար տեղական կարգադրութիւն ընել կը հասկնան, առանց Վարիզի դաշնադրութեան վրայ փոփոխութիւն ըլլալու, այսինքն՝ Օսմանեան կայսրութեան ամբողջութիւնը վնասուելու, ունք ալ Սերոպիոյ եւ Ռումանիոյ ժողովրդոց ունեցածին նման անկախութիւն: Այս երկու կարծեաց իրարու չհամաձայնիլը Արեւելքի զրից շիթութիւն պիտի բերէ եւ թերեւս պատերազմի դուռն բանայ:

Պիտի ըսուի. քրիստոնէից չահն ամէն բանէ գերագոյն է, եւ եւրոպացոց նուիրական պարտքն է զայն ապահովցնելը: Խնդրոյ տակ եղած երկիրներուն մէջ թէ պապական կայ եւ թէ յունադաւան, որոց վրայէն եթէ մահմետական իշխանութեան անտարբերեայ ազդեցութիւնը վերցունես, իրարու համար քան զմահմետականն աւելի սխերիմ պիտի ըլլան:

Մենք կերպ մը չենք կրնար գտնել առաջարկելու. դեսպանաժողովը միայն կարող է ամէն հեռատեսութիւն գործածել. սակայն կան քանի մը զգալի բարենորոգումներ՝ որոնք կրնան գործի դրուիլ: Գուռն արդէն խոստացաւ, եւրոպացին ալ պէտք է՝ որ ընդունի: Գուռն ընդունելու է այն փոփոխութիւնները՝ որ քրիստոնէից պահանջածն է եւ նոցա յառաջադիմութեան օգտակար է, այնպիսի փոփոխութիւններ՝ որ քանի մը տարի վերջը դարձեալ աշխարհք իրար անցունելու դժուարութիւններն երեւան չը բերին: Սղրակահոյնելիք բարեկարգութեան ասկէ ուրիշ անհեր-





քելի պայման չկայ: Յաւալի բան է՝ որ սարիէ մը 'ի վեր վեց պետութիւնք միանգամայն չկրցան այս իմաստով բարեկարգութիւն առաջարկել Թուրքիոյ, այլ թոյլ տուն՝ որ յուզմունքներն աւելնան, եւ Ռուսիոյ գիտաւորութիւնը իբր թէ չհասկցուելու անստուգութեանց մէջ դիտելով, այնչափ ըրին՝ որ անոր ազդեցութիւնը կարծուածէն աւելի ստուարացուցին Արեւելքի գործոց մէջ: Ուրիշ պետութիւնք այսօր 'ի հարկէ պիտի զիջուցանեն իրենց հետ չհամաձայնողն՝ որ ընդհանուր վիճակը կա՛մ հաւասարակշռութիւնը չը խանգարի: Տարակոյս չկայ՝ թէ պատերազմ կրնայ ըլլալ, բայց այս ալ ստոյգ է՝ թէ եւ սչ մէկը պիտի չանի. հիմայ խնդիրը չկրնար լուծուիլ, եւ բոլոր Նւրոպիոյ շահուն համար ամէնքն ալ համաձայնութեամբ 'դունէն պահանջելու են՝ որ ազատական բարենորոգումն առ հասարակ 'ի գործ դնէ բոլոր քրիստոնեայ ժողովրդոց բնակած նահանգներուն մէջ, եւ Ռուսիոյ խտապահանջութեանց ստաջքն առնելու են: Մոսկաւի պատերազմէ վրկուելու ուրիշ ճար չկայ, այլ միայն քրիստոնէից օրինաւոր ազատութիւնը, բարեկեցութիւնը եւ ասպանութիւնը կառավարութեանց հրսկողութեան ներքեւ երաշխաւորել: Այս է գիւանադիտութեան պարտաւորութիւնը, զոր կատարելու համար դեպանաժողով մը գումարուած է այսօր: Կը յուսամք թէ կրնաջողի, եւ ստուգիւ այնպիսի մեծ ծառայութիւն մ'ըրած կըլլայ աշխարհի, որուն յիշատակը պատմութեան մէջ կը մնայ:

\* \* \*





